



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ.Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական

Թեմա՝ 6-7 տարեկանի ճգնաժամը և ուսումնառությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Է. Քոսակյան

Կատարող՝ Լ. Սայամյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. 6-7 տարեկանի ճգնաժամը և ուսումնառությունը.....	5
Տարիքային ճգնաժամեր.....	5
6-7 տարեկանի ճգնաժամը և հաղթահարման ուղիները.....	7
Գլուխ 2. Հետազոտական աշխատանք.....	11
Հետազոտական աշխատանքի ծրագիրն ու նկարագրությունը	11
Հետազոտական աշխատանքի արդյունքների ամփոփում	13
Եզրակացություն	15
Գրականության ցանկ	16

Ներածություն

Տարիքային ճգնաժամերը կյանքի` համեմատաբար կարճ, բայց բուռն փուլեր են, որոնք բնութագրվում են մտավոր կտրուկ փոփոխություններով: Այդ մասին պատկերացումները ձևավորվել են դեռևս հնագույն ժամանակներում:

Տարբեր հեղինակներ ինչպիսիք են` Լ. Ս. Վիգոտսկին, Կ. Յունգը, Ծ. Բյուլերը, Ա. Ֆրոյդը և ուրիշներ, առանձնացրել են ճգնաժամային հետևյալ շրջանները`

1. Նորածնային և 1 տարեկանի
2. 3 տարեկանի,
3. դեռահասության,
4. 17 տարեկանի,
5. 18-20 տարեկանի
6. 22 տարեկանի
7. 25-33 տարեկանի
8. 35-40 տարեկանի
9. 42 տարեկանի
10. ծերության

Տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը խիստ հրատապ է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով: Գործնական տեսանկյունից հիմնախնդիրը կարևոր է նախ և առաջ բժշկության ոլորտում մասնավորապես հոգեախտաբանության ոլորտում, քանի որ ճգնաժամային տարիքներում կտրուկ աճում է հոգեկան հիվանդությունների քանակը: Այդ իսկ պատճառով ճգնաժամերի բազմակողմանի հետազոտությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ ախտաբանական երևույթների առաջացման պատճառները, պայմանները, մեխանիզմները, և ավելի լավ կազմակերպել բուժական գործընթացը:

Տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը կարևոր է նաև մանկավարժական տեսանկյունից: Ճգնաժամային շրջանում մարդու զարգացումը տարբերվում է կայուն շրջաններից, հետևաբար պահանջվում է մանկավարժական այլ մոտեցումներ, քանի որ սխալ մանկավարժական մոտեցումների հետևանքով կարող

են սրվել ճգնաժամերը: Ինչն էլ իր հերթին բացասական հետևանքներ կարող է ունենալ անձի զարգացման գործընթացի վրա:

Չետագոտության նպատակն է ուսումնասիրել 6-7 տարեկանի ճգնաժամը և ուսումնառությունը :

Չետագոտության խնդրներն են՝

1. Ուսումնասիրել 6-7 տարեկանի ճգնաժամը վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. Տարրական օղակում կիրառել հոգեբանական մի շարք մեթոդներ բացահայտելու համար 6-7 տարեկանի ճգնաժամի դրսևորումը և ազդեցությունը աշակերտների ուսումնառության վրա:

3. Կատարել հոգեբանական աշխատանք 6-7 տարեկանի ճգնաժամ ունեցող աշակերտների հետ:

4. Կատարել հետագոտության արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն:

Չետագոտության վարկած՝

Մենք կարծում ենք, որ 6-7 տարեկանի ճգնաժամի ազդեցությունը կարող ենք նվազեցնել ուսումնառության մեջ խաղային տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Չետագոտության ընտրանք՝ առաջին դասարանի աշակերտներ:

Չետագոտության մեթոդներն են՝ դիտում, զրույց-քննարկում, հոգեբանական խաղերի անցկացում:

Գլուխ 1. 6-7 տարեկանի ճգնաժամը և ուսումնառությունը

Տարիքային ճգնաժամեր

Չարգացման ընթացքում երեխայի մոտ դիտվում են այնպիսի շրջաններ, երբ փոփոխությունները հարաբերականորեն դանդաղ ընթացք են ունենում, այդ ընթացքում երեխան երկար ժամանակ պահպանում է հոգեկան պատկերների միևնույն հիմնական գծերը և ավելի կտրուկ թռիչքային շրջաններ: Այդպիսի թռիչքային անցումներն անվանում են զարգացման ճգնաժամ: Դրանք անհատի կյանքի այն գերզգայուն շրջաններն են, որոնց ընթացքում անհատն ունի վարքի որոշակի ձևեր ձեռք բերելու նպաստավոր պայմաններ: Այս ժամանակահատվածների ձևն ու տևողությունը, ինչպես նաև ընթացքի ծանրությունը կախված են անհատական առանձնահատկություններից, սոցիալական և միկրոսոցիալական պայմաններից:

Տարիքային ճգնաժամերի պրոբլեմը մանրամասն տեսական վերլուծության է ենթարկել Լ. Վիգոտսկին: Ճգնաժամի եղությունը Վիգոտսկին տեսնում է պահանջմունքների, մղումների, արժեքների, հետաքրքրությունների վերակառուցման, միջավայրի նկատմամբ երեխայի վերաբերմունքի, հարաբերությունների փոփոխության, նոր գործունեության ձևավորման մեջ: Ըստ նրա ճգնաժամային շրջանը անցնում են բոլորը, ավելին խոսելով 3 տարեկանի ճգնաժամի մասին նա գրում է. «Եթե ճգնաժամն ինչ-ինչ պատճառներով թույլ է արտահայտվում, ապա դա հանգեցնում է հաջորդող տարիքում երեխայի անձնավորության աֆեկտիվ և կամային ոլորտների զարգացման հապաղելուն»: Վիգոտսկին սխալ է համարում ճգնաժամային տարիքները միայն բացասական տեսանկյունից դիտարկելը: Նա գրել է «Այնուամենայնիվ մեծագույն սխալ կլինի կարծել, թե սպառվում է ճգնաժամային տարիքների նշանակությունը: Չարգացումը երբեք չի դադարեցնում իր ստեղծագործ աշխատանքը և ճգնաժամային շրջաններում էլ մենք տեսնում ենք զարգացման կառուցողական գործընթացներ:»

Վիգոտսկին առանձնացնում է հետևյալ ճգնաժամային տարիքները՝

ա) Նորածնության ճգնաժամ

բ) 1 տարեկանի

գ) 3 տարեկանի

դ) 7 տարեկանի

ե) 13 տարեկանի

զ) 17 տարեկանի

Ըստ նրա ճգնաժամերից յուրաքանչյուրն անցնում է երեք Էտապ՝ նախաճգնաժամային, ճգնաժամային, հետճգնաժամային: Բուն ճգնաժամը սովորաբար իր գագաթնակետին է հասնում տարիքային փուլի կեսին:

Խորհրդային շրջանի ռուս հոգեբանների մեծ մասը ճգնաժամերի առաջացման գործում ավելի մեծ տեղ էին հատկացնում Էկզոգեն (արտածին) գործոններին: Նրանք գտնում էին, որ ճգնաժամերը պարտադիր երևույթ չեն, այլ արդյունք են անբարենպաստ արտաքին ներգործությունների, դաստիարակության կամ սոցիալական այնպիսի իրավիճակի, որը չի նպաստում անձի լիարժեք զարգացմանը:

Որոշ հոգեբաններ կարծում են, որ զարգացումը պետք է լինի ներդաշնակ և առանց ճգնաժամի, քանի որ ճգնաժամերը աննորմալ, «ցավոտ» երևույթ են, ոչ պատշաճ դաստիարակության արդյունք: Մինչդեռ հոգեբանների մեկ այլ մասը պնդում է, որ զարգացման մեջ ճգնաժամերի առկայությունը բնական է: Ավելին, զարգացման հոգեբանության որոշ պատկերացումների համաձայն՝ երեխան, ով իսկապես ճգնաժամ չի ապրել, հետագայում լիովին չի զարգանա:

Տարիքային ճգնաժամերը մի կողմից պայմանավորված են տարիքային անցումներով, մյուս կողմից՝ տարիքային հիմնախնդիրների հաղթահարման դժվարություններով:

Ճգնաժամերը երկար չեն տևում՝ մի քանի ամիս, սկսվում և ավարտվում են աննկատ, հստակ սահմաններ չկան, սակայն անբարենպաստ հանգամանքներում կարող են ձգվել մինչև մեկ կամ նույնիսկ երկու տարի:

Դպրոցականները կորցնում են աշխատունակությունը, թուլանում է նրանց հետաքրքրությունը դասերի նկատմամբ, նվազում է առաջադիմությունը, երբեմն առաջանում են ցավոտ փորձառություններ, ներքին կոնֆլիկտներ: Չարգացումը հաճախ կրում է նեգատիվ՝ «կործանարար» բնույթ: Շատ հեղինակների կարծիքով

այս փուլում երեխան ավելի շատ կորցնում է իր նախկին ձեռքբերումները, քան նոր բան է ձեռք բերում: Կորչում է հետաքրքրությունը խաղալիքների, պարապմունքների նկատմամբ, հրաժարվում է կատարել նախկինում ընդունված նորմերը, փոխվում են նրա հարաբերությունները շրջապատի հետ: Երեխան կարծես տրամագծորեն փոխվում է և դառնում ուրիշ:

6-7 տարեկանի ճգնաժամը և հաղթահարման ուղիները

Անկախ նրանից՝ երեխան դպրոց է գնում 6, թե 7 տարեկանում, միևնույն է, իր զարգացման ընթացքում որոշ շրջան նա ճգնաժամ է ապրում: Բոլորն էլ նկատում են, որ երեխան նախադպրոցական տարիքից դպրոցականի անցման ժամանակ դառնում է ավելի դժվար դաստիարակելի: 6-7 տարեկան երեխան մյուսներից տարբերվում է առաջին հերթին իր անմիջականության, նախվորյալ կորստով: Մանկական անմիջականությունը բխում է ներքին և արտաքին կյանքի ոչ բավարար տարբերակվածությունից: Նախադպրոցականի համար իր ապրումները, ցանկություններն ու դրանց բավարարման ուղղված գործողությունները դեռևս մեկ ամբողջություն են: Այս շրջանում երեխան իսկապես շատ է փոխվում, և փոփոխությունները կրում են ավելի խորը բնույթ: Երեխայի վարքում ավելանում է ինչ-որ անհեթեթ, կեղծ, չափից շատ շարժունություն, երեխան կատակներ է անում, ծիծաղում, խաղում, բայց դա նրա վարքում բնական է դիտվում, իսկ այս տարիքում երեխան կարծես կեղծ մի բան է անում, և այդպիսի վարքը քննադատվում է մեծահասակների կողմից:

6-7 տարեկանի ճգնաժամի ամենաբնորոշ հատկանիշը երեխայի անձի ներքին և արտաքին կողմերի տարբերակման սկիզբն է: Երեխայի անմիջականության տակ թաքնվում է այն, որ երեխան արտաքինից այնպիսին է, ինչպիսին ներսից է: 6-7 տարեկանի ճգնաժամին հատուկ է նաև այն, որ երեխայի ապրումները սկսում են իմաստ ստանալ (զայրացած երեխան հասկանում է, որ ինքը զայրացած է), դրա շնորհիվ առաջանում է այնպիսի նոր վերաբերմունք իր հանդեպ, որը գոյություն չունեի նախքան ապրումների ընդհանրացումը: Մի քանի անգամ հայտնվելով միևնույն իրավիճակում՝ երեխան ունենում է այդ իրավիճակի արդյունքում ընդհանրացված զգացում: Այս տարիքը երեխայի սոցիալական «ես»-ի առաջացման

տարիքն է: Ինքնագիտակցության փոփոխությունը բերում է երեխայի արժեքային համակարգի փոփոխության: Այն, ինչն արժեքավոր էր մի ժամանակ, այժմ երկրորդական է դառնում: Երեխան սկսում է իրեն սոցիալական անհատ զգալ, առանձին միավոր, ուստի պետք է հնարավորինս աջակցել նրա՝ որպես անհատի կայացմանը:

Կրտսեր դպրոցում հաճախ դիտվում են դժվարությունների երեք տեսակներ: Դրանցից առաջինը կապված է երեխայի համար դպրոցական անսովոր ռեժիմի հետ՝ պետք է ժամանակին արթնանալ, չի կարելի բացակայել դասերից, բոլոր դասերին պետք է նստել հանգիստ, տնային հանձնարարությունները պետք է ժամանակին կատարել և այլն: Անհրաժեշտ սովորությունների բացակայության հետևանքով երեխան խիստ հոգնում է, նկատվում են ուսումնական աշխատանքի տապալման դեպքեր, ռեժիմի որոշ կողմերի խախտումներ: 6-7 տարեկան երեխաների մեծ մասը դեռևս հոգեֆիզիոլոգիական տեսակետից լիարժեք պատրաստ չէ համապատասխան սովորությունների ձևավորման համար ուսումնական գործունեության ընթացքում: Անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչներն ու ծնողները հստակ ու հասկանալի լեզվով արտահայտեն երեխային ներկայացվող նոր պահանջները, մշտապես հետևեն ու հսկեն դրանց կատարմանը, խրախուսման, և հարկ եղած դեպքում, պատժի միջոցներ ձեռք առնեն երեխաների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով:

Դժվարությունների երկրորդ տեսակը, որը հաճախակի է հանդիպում առաջին դասարանցիների մոտ, կապված է ուսուցչի, դասընկերների և ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթի հետ: Չնայած երեխաների նկատմամբ ունեցած բարի վերաբերմունքին ուսուցիչն, այնուհանդերձ, հանդես է գալիս որպես հեղինակավոր ու խիստ դաստիարակ: Նա պահանջում է հետևել վարքի որոշակի կանոնների և կանխում է հնարավոր շեղումները: Նա մշտապես գնահատում է երեխաների աշխատանքը: Որոշ երեխաներ դառնում են խիստ կաշկանդված, իսկ ուրիշները՝ չափից ավելի ազատ (տանը նրանց վարքագիծը կարող է բոլորովին այլ դրսևորումներ ունենալ): Պատահում է նաև, որ առաջին դասարանցին նոր շրջապատում շփոթված է զգում իրեն, չի կարողանում արագորեն ծանոթանալ մյուս երեխաների հետ, իրեն միայնակ է զգում: Ուսուցիչը բոլոր երեխաներին նույնանման պահանջներ է ներկայացնում, բայց ուշադրությամբ

հետևում է, թե տարբեր երեխաներ այդ պահանջները կատարելիս անհատական ինչպիսի առանձնահատկություններ են դրսևորում: Դասարանում սովորողների փոխհարաբերությունները նորմալ են լինում այն դեպքում, երբ ուսուցիչը հավասարապես պահանջկոտ է բոլոր երեխաների նկատմամբ, երբ թուլյերին խրախուսում է աշխատասիրության համար: Այս ամենը հոգեբանական բարենպաստ ֆոն է ստեղծում դասարանի կոլեկտիվ աշխատանքի համար: Դպրոցում սովորելու առաջին ամիսների ընթացքում երեխայի հետ տարվող դաստիարակչական աշխատանքի նպատակը նրանում այն զգացումը ներարկելն է, որ դասարանը, ինչպես նաև դպրոցը, ոչ թե իրեն օտար մարդկանց խումբ է, այլ հասակակիցների, կրտսեր ու ավագ ընկերների բարեկամական ու զգայուն կոլեկտիվ:

Դպրոց ընդունվելու հետ միասին փոխվում է նաև երեխայի վիճակը ընտանիքում: Նա ստանում է նոր իրավունքներ և պարտականություններ (օրինակ, դպրոցականին պետք է հատուկ տեղ ու ժամանակ հատկացնել տնային հանձնարարությունների կատարման համար, պետք է հաշվի նստել նրա ռեժիմի հետ):

Դժվարությունների երրորդ տեսակը առաջին դասարանցիները ունենում են ուսումնական տարվա վերջին շրջանում: Սկզբում նրանք հաճուքով դպրոց էին շտապում դասերից բավականին շուտ, պատրաստակամությամբ էին ցանկացած վարժություններ կատարում, հպարտանում էին ուսուցչի տված գնահատականներով: Այս ամենի մեջ իր արտահայտությունն էր գտնում գիտելիք ձեռք բերելու նրանց ընդհանուր պատրաստակամությունը: Քանի որ միաժամանակ դպրոցի կյանքի արտաքին կողմերը երեխայի համար սովորական են դառնում, ապա նրա մեջ մարում է ուսման նկատմամբ սկզբնական ձգտումը և վրա է հասնում անտարբերությունը: Ուսուցիչները երբեմն փորձում են հաղթահարել այն՝ ուսումնական նյութի մեջ հետաքրքրաշարժ տարրեր ներմուծելով: Բայց այդ տարբերակը արդյունավետ է լինում միայն կարճ ժամանակի ընթացքում: Այդպիսի վիճակը կանխելու ամենահուսալի եղանակը աշակերտներին բավականաչափ բարդ ուսումնա-իմացական խնդիրներ առաջադրելը, նրանց պրոբլեմային իրավիճակների առջև կանգնեցնելն է: Երեխաներին այնպիսի հանձնարարությունների առաջադրումը, հենց սկզբից առաջին դասարանցուն մտցնում են մտավոր

որոնումների ոլորտը: Այդպիսի մտածական ակտիվ գործունեության շնորհիվ երեխաները կարողանում են գիտակցորեն յուրացնել անհրաժեշտ գիտելիքներն ու ունակությունները: Այդ աշխատանքը գրավում է երեխաներին և լիովին մատչելի է նրանց համար, եթե ուսուցիչը ճիշտ է ղեկավարում: Առաջին դասարանցիներն, անշուշտ, մեծ թվով տվյալներ կարող են ամուր կերպով մտապահել: Այսպիսով, դպրոցական կյանքի ոլորտը մուտք գործելու սկզբնական շրջանում երեխայի հոգեկանը լուրջ փոփոխություններ է կրում: Նա ձեռք է բերում կյանքի նոր ռեժիմի հետ կապված կարևոր սովորություններ և փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ է հաստատում ուսուցիչների ու ընկերների հետ: Ուսումնական նյութի նկատմամբ առաջ եկած հետաքրքրությունների հիման վրա նրանում դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ:

Երբ վեցամյա երեխան դասարան է մտնում, նա դառնում է դպրոցական: Այս պահից սկսած խաղը նրա կյանքում աստիճանաբար կորցնում է իր առաջատար դերը, թեև շարունակում է կարևոր տեղ զբաղեցնել նրանում: Կրտսեր դպրոցական տարիքը երեխայի համար խաղի և ուսուցման ուղիղ կապ ստեղծելու փուլն է: Հետևաբար, որպես 6-7 տարեկան առաջին դասարանցիների ուսուցման կազմակերպման առաջին կարևոր պայման, կարող ենք հատուկ շեշտադրել խաղային գործունեությունը: Ընդ որում, խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն, ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում ամենամեծ տեղն է գրավում և որին երեխան օրվա մեծ ժամանակն է տրամադրում, այլ որովհետև խաղի զարգացման հետ կապված երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները, զարգանում են հոգեկան այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանի անցնելու համար: Խաղում են ծնվում զարգացման հաջորդ փուլի՝ ուսումնական գործունեության տարրերը:

Կրտսեր դպրոցականի համար առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը, որը էական փոփոխություններ է մտցնում նրա վարքի մոտիվացիայում, և նրա իմացական ու բարոյական ուժերի զարգացման նոր աղբյուրներ է բացահայտում, սակայն այս փուլը ոչ բոլոր դեպքերում է անցնում սահուն: Դպրոցական ուսուցման հենց առաջին քայլերից անհրաժեշտ է աջակցել երեխային ու զարգացնել բուն գիտելիքների արժեքավորության ինտուիտիվ

ըմբռնումը, որը նկատվում է նրա մոտ: Այդ պետք է իրագործել դպրոցական նյութի անսպասելի ու գրավիչ կողմերի ակնառու ցուցադրման միջոցով: Սա թույլ կտա երեխաների մեջ ձևավորելու ուսումնական գործունեության հիմքը հանդիսացող իսկական իմացական հետաքրքրություններ:

Ճգնաժամը հաղթարելու գործում ամենակարևորը երեխայի հետ երկխոսության մեջ լինելն է, նրա հետ ջերմ, հարազատ կապ հաստատելով: Իսչպես նաև ծնող-ուսուցիչ երկխոսությունը:

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք

Հետազոտական աշխատանքի ծրագիրն ու նկարագրությունը

Հետազոտական աշխատանքը իրականացրել ենք Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2022-2023 ուս տարվա առաջին դասարանում սովորող աշակերտների հետ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել 6-7 տարեկանի ճգնաժամը և ուսումնառությունը :

Հետազոտության խնդրներն են՝

1. Ուսումնասիրել 6-7 տարեկանի ճգնաժամը վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. Տարրական օղակում կիրառել հոգեբանական մի շարք մեթոդներ բացահայտելու համար 6-7 տարեկանի ճգնաժամի դրսևորումը և ազդեցությունը աշակերտների ուսումնառության վրա:

3. Կատարել հոգեբանական աշխատանք 6-7տարեկանի ճգնաժամ ունեցող աշակերտների հետ:

4. Կատարել հետազոտության արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն:

Հետազոտության վարկած՝

Մենք կարծում ենք, որ 6-7 տարեկանի ճգնաժամի ազդեցությունը կարող ենք նվազեցնել ուսումնառության մեջ խաղային տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Չետագոտության ընտրանք՝ առաջին դասարանի աշակերտներ

Չետագոտության մեթոդներն են՝ դիտում, գրույց-քննարկում, հոգեբանական խաղերի անցկացում:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունից: 6-7 տարեկան առաջին դասարանցիները գտնվում են կարծես անցումային փուլում, որտեղ նոր անձնային, հոգեբանական որակները առավել հեշտ և լավ ձևավորվում են խաղային գոծունեության մեջ: Խաղային գործունեությունը հետաքրքիր է երեխաներին և կարող է առաջացնել նորի ճանաչման դրական շարժառիթ:

Չարկ է նշել, որ խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման խաղային մեթոդ, և՛ որպես ուսուցման ձև, և՛ որպես երեխայի անձի զարգացման միջոց: Այն պետք է դիտարկել որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև:

Խաղը վախի, տագնապի, անվստահության զգացողության, ցածր ինքնագնահատականի հաղթահարման միջոց է: Խաղալով երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի լիարժեք անդամ:

Չետագոտական աշխատանքը կատարելու ընթացում, առաջին դասարանցիների հետ կազմակերպել ենք խաղեր, որոնց նպատակն էր պարզել, արդյոք երեխաները սահուն անցել են ադապտացիայի փուլը: Այս խաղերի միջոցով փորձել ենք պարզել, թե ում մոտ է առկա ցածր ինքնագնահատական, որը պայմանավորված է 6-7 տարեկանի ճգնաժամով:

Առաջին խաղը կոչվում է «Ով եմ ես»: Դրա համար կերպարվեստի դասաժամին յուրաքանչյուր աշակերտի տվել ենք մեկական թղթե տիկնիկ՝ ինքնանկար (նկ. 1,2), որոնք ներկելու միջոցով երեխայի մոտ փորձել ենք զարգացնել գունազգացողությունը: Խաղի ժամանակ երեխաներից յուրաքանչյուրը ինքնանկար-տիկնիկի միջոցով ներկայացրել է իրեն, ով է ինքը, ինչ է սիրում կամ չի սիրում, ինչ է կարողանում անել կամ չի կարողանում և այլն:



Նկ. 1



Նկ. 2

Երկրորդ խաղը կոչվում է «Իմ ուժեղ և թույլ կողմերը»: Խաղի ժամանակ երեխաներին տվել ենք աղյուսակ, որի մի կողմում երեխաները գրել են իրենց հինգ ուժեղ կողմերը, մյուս կողմում՝ հինգ թույլ (բնավորության գիծ, հմտություն, կարողություն և այլն):

Խաղերի արդյունքների վերլուծության, գրույցների և դիտման մեթոդի արդյունքում, պարզ է դարձել, որ երեխաները որոնք մեծամասամբ ներկայացրել են իրենց դրական կողմերը կամ կարողությունները ունեն բարձր ինքնագնահատական: Իսկ այն աշակերտները որոնք դժվարությամբ են իրենց ներկայացնում, առավել նկատում են իրենց թույլ կողմերն, իսկ ուժեղ կողմերը անտեսված են, նախաձեռնողականություն չեն դրսևորում և կաշկանդված են, տվյալ պահին ունեն ցածր ինքնագնահատական, ինչն էլ տարիքային ճգնաժամի մասին մեզ հուշող առաջին ազդակներից են:

Չետագոտական աշխատանքի արդյունքների ամփոփում

Այս հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ աշակերտներից երկուսի մոտ առկա է տարիքային ճգնաժամ: Նրանց հետ աշխատել ենք գրույցի մեթոդով և խրախուսանքի մեկ տեխնիկայով :

Երեխաները ուլքեր ունեին տարիքային ճգնաժամ, ունեին ցածր ինքնագնահատական և մեր խնդիրն էր բարձրացնել ինքնագնահատականը, տալ աշակերտներին ինքնաարտահայտվելու հնարավորություն՝ նպաստելով նրանց առավել արագ հարմարմանը նոր միջավայրում:

Կիրառեցինք մի հետաքրքիր ու արդյունավետ տեխնիկա : Յուրաքանչյուր աշակերտին մեկ օր նշանակեցինք դասարանում հերթապահ և իրենց կցեցինք՝ ևս երկու աշակերտներ՝ որպես օգնականներ: Այս ամենի նպատակն էր աշակերտին հնարավորություն տալ ինքնաարտահայտվել, վերաարժևորել իրեն, զգալ պատասխանատվություն ամբողջ դասարանի համար, ստեղծել հնարավորություն ցույց տալ իրեն, որ ինքը կարող է և այս դասարանի մի մասնիկն է :

Իհարկե, այս ամենին նախորդել է բավականին երկար հոգեբանական զրույցներ, նախապատրաստական աշխատանքներ մեթոդի կիրառման համար :

Բացի դա աշակերտներից յուրաքանչյուրի հետ նաև կիրառել ենք ևս մեկ հրաշալի տեխնիկա, որը աշակերտներին հնարավորություն է տալիս գտնել իրենց թույլ և խոցելի կողմը և այն ուժեղացնել ներշնչանքի միջոցով՝ նրան տրամադրելով «պաշտպանիչ բաճկոններ» : Օրինակ՝ աշակերտներից մեկը, ով նախաձեռնող չէր, անգամ դասը սովորած ժամանակ խուսափում էր պատասխան ներկայացնելուց, իր բաճկոնի վրա գրել է՝ «Ես համարձակ եմ» (նկ. 3, 4) և հազցրել տիկնիկին ու ամեն անգամ, երբ պետք էր նախաձեռնողականություն դրսևորել և նա տատանվում էր, նայում էր « պաշտպանիչ բաճկոնին » և համարձակություն ձեռք բերում:



Նկ. 3



Նկ. 4

Այս ամենը կիրառելով ապահովել ենք դրական արդյունք:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով 6-7 տարեկան երեխաների ճգնաժամը և ուսումնառությունը, եկանք հետևյալ եզրակացության

1. Գրեթե բոլոր երեխաները անցնում են ճգնաժամի այս փուլով:
2. Ճգնաժամերը երկար չեն տևում՝ մի քանի ամիս, սակայն անբարենպաստ հանգամանքներում կարող են ձգվել մինչև մեկ կամ նույնիսկ երկու տարի:
3. Ճգնաժամերից յուրաքանչյուրն անցնում է երեք Էտապ՝ նախաճգնաժամային, ճգնաժամային, հետճգնաժամային:
4. Ճգնաժամը հաղթարելու գործում ամենակարևորը երեխայի հետ երկխոսության մեջ լինելն է, նրա հետ ջերմ, հարազատ կապ հաստատելով: Ինչպես նաև ծնող-ուսուցիչ երկխոսությունը:
5. Ճգնաժամը հաղթահարելու համար կարևոր է ուսուցման գործընթացի արդյունավետությունը, որը կախված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունից:
6. Խաղը կրտսեր դպրոցականի ուսուցման կարևորագույն ձևերից է: Խաղային գործունեությունը հետաքրքիր է երեխաներին: Խաղը վախի, տագնապի, անվստահության զգացողության, ցածր ինքնագնահատականի հաղթահարման միջոց է:

Ընդհանրացնելով վերոնշյալը, կարելի է ընդգծել, որ խաղերը երեխայի դաստիարակության և զարգացման վրա ունեն դրական ներգործություն, կիրառելի են ուսումնական գործընթացում և 6-7 տարեկանների ճգնաժամը կարելի է հաղթահարել խաղերի միջոցով:

Գրականության ցանկ

1. Խուղոյան Ս.Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները»
2. Վիգոտսկի Լ.Ս. «Տարիքային խնդիր»
3. Պետրովսկի Ա. Վ. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»
4. psycenter.am
5. hy.wikipedia.org